Արձանագրություն N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 24.07.2020թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Գալստյանը, Է. Թարփոշյանը, Հ. Սարգսյանը, Հ. Մելքումյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 22.07.2020 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում պատասխանելու վերաբերյալ**

(Գ. Ոստանիկյան)

<u>Պարզաբանման պահանջի տեքստ հ 1</u>.

Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ հարցին"
1" Ըստ հրավերում հրապարկված ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ, ավտոբուսների մատակարարման ժամկետ է սահմանվում համապատասխանաբար՝ 30 հատի համար՝ 90 օր, 30 հատի համար՝ 120 օր և մնացորդ 40-ի համար 150 օր: Նաև *** կետով նշված է, որ մատակարարման ժամկետը չի կարող ուշ լինել քան սույն թվականի դեկտեմբերի 25-ը: Սակայն մրցույթի պայմաններից վերցված տվյալներով, եթե հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում, անգործության ժամկետ է սահմանված 10 օր, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստացվում է 4 աշխատանքային օրում և պայմանագրի կնքման ժամկետ է սահմանված մինչև 10 աշխատանքային օրը, ապա ենթադրենք,եթե համաձայնագիրը ուժի մեջ մտնի պայմանագրի ստորագրման հաջորդ իսկ օրը, առաջին 30 հատ խմբաքանակի և առհասարակ 100 հատ ավտոբուսի մատակարարման համար մնում է 72 օրացուցային օր, եթե առաջնորդվենք Գնման Ժամանակացույցի *** կետով: Խնդրում ենք տալ պարզաբանում,ո՞ր ժամկետներով առաջնորդվել՝ Գնման Ժամանակացույցով՝ 90 օր,120 օր,150 օր, թե՞ *** կետում նշված պայմանով:

<u>Պարզաբանում տրամադրելու տեքստ</u>.

Պատասխան.
Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում ենք հետևյալը.
Սույն գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի կիրառմամբ, համաձայն որի՝ «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել...»:

Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Պատվիրատուի կողմից հրավերով հստակ սահմանվել է ապրանքի մատակարաման փուլային ժամկետներ՝ մինչև 90 օր, 120 օր և 150 օր և մասնակիցները պետք է առաջնորդվեն նշված ժամկետներով, իսկ ինչ վերաբերում է այն դրույթին, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, ապա դեկտեմբերի 25-ով սահմանափակվում է տվյալ տարվա համար նախատեսված պատվիրատուի վճարման պարտավորությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Հ. Սարգսյան
Անդամներ՝		Է. Գալստյան
		Է. Թարփոշյան
		Հ. Սարգսյան
		Հ. Մելքումյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան